ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2026թ. N ----- -Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԹԻՎ 4 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 34-35-րդ, 42-րդ և 67-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Թիվ 4 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով հատկացված 18,900,000 (տասնութ միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամի սահմաններում՝ կանոնադրական կապիտալի՝ 18,899,424 (տասնութ միլիոն ութ հարյուր իննսունինը հազար չորս հարյուր քսանչորս) դրամի չափով ավելացմամբ պայմանավորված՝ Երևան համայնքի կողմից լրացուցիչ ձեռք բերված 13,152 (տասներեք հազար մեկ հարյուր հիսուներկու) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը՝ 1,437 (մեկ հազար չորս հարյուր երեսունյոթ) դրամ անվանական արժեքով տեղաբաշխման արդյունքները:

2. «Թիվ 4 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 47,290,233 (քառասունյոթ միլիոն երկու հարյուր իննսուն հազար երկու հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ, որը կազմում է 32,909 (երեսուներկու հազար ինը հարյուր ինը) հատ 1,437 (մեկ հազար չորս հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Թիվ 4 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված

Կազմված է ----------2026թ.
և բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 5 օրինակ
Օրինակ _____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
Երևան քաղաքի ավագանու
« » 2026թ.
N -Ա որոշմամբ

ՀՀ Երևանի քաղաքապետ՝

Տ. ԱՎԻՆՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ
ԿՈՂՄԻՑ 08.06.1995թ.,
գրանցման N 273.140.00891

վկայական N01 Ա 013392

ՀՎՀՀ 01505616

04.06.2010թ. գրանցված կանոնադրության
թիվ ____.___ փոփոխությունը գրանցված է
ՀՀ արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից

_____

“____”_____ 2026թ.

«ԹԻՎ 4 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(փոփոխություն)

2026թ.

Ընկերության կանոնադրության 4.2. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 47,290,233 (քառասունյոթ միլիոն երկու հարյուր իննսուն հազար երկու հարյուր երեսուներեք) դրամ, որը կազմում է 32,909 (երեսուներկու հազար ինը հարյուր ինը) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1,437 (մեկ հազար չորս հարյուր երեսունյոթ) դրամ:

Բոլոր 32,909 բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետության Երևան համայնքին»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Թիվ 4 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության՝ 04.06.2010թ. պետական ռեգիստրում գրանցված կանոնադրության բաղկացուցիչ մասը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԹԻՎ 4 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Թիվ 4 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի պահանջներով, այն է՝ Երևանի ենթակայության կազմակերպությունների կանոնադրությունների փոփոխությունները հաստատում է Երևանի ավագանին:

Երևանի քաղաքի ավագանու՝ 2024 թվականի դեկտեմբերի 24-ի հ.268-Ն և Երևանի քաղաքապետի՝ 2025 թվականի հունվարի 14-ի հ.103-Ա որոշումներով, ռենտգեն ախտորոշման համակարգ ձեռք բերելու նպատակով՝ հաստատվել է Երևան քաղաքի 2025թ. բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով «Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ-ին հատկացվելիք գումարի չափը՝ 18,900,000 ՀՀ դրամ, ինչն էլ ամբողջությամբ՝ որպես կանոնադրական կապիտալի ներդրում, հատկացվել է ընկերությանը:

Նշված գումարի սահմաններում տեղաբաշխվել է լրացուցիչ 13,152 հատ հասարակ (սովորական) բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 1,437 ՀՀ դրամ անվանական արժեքով, ինչի արդյունքում կանոնադրական կապիտալն ավելանում է 18,899,424 ՀՀ դրամով:

Հատկացված գումարի չափով կանոնադրական կապիտալի ավելացումը բխում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 42-րդ հոդվածի պահանջներից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ